# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՍՏՂԻԿ ՄԱՐԱԲՅԱՆԻ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Գործուղված անձը

*Աստղիկ Մարաբյան, ՀՀ ԿԳՄՍՆ մշակութային ժառանգության վարչության պետ*

2. Գործուղման վայրը և ժամկետները

*Ֆրանսիայի Հանրապետություն, ք. Փարիզ, դեկտեմբերի 18-21, 2023 թ.*

3. Հրավիրող կողմը

*Ֆրանսիայի պատմամշակութային ժառանգության ինստիտուտ, Ֆրանսիայի մշակույթի նախարարության Համաշխարհային պատմամշակութային ժառանգության առաքելության ղեկավար Բրունո Ֆավել*

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

   - *Մասնակցություն «Հայկական պատմամշակութային ժառանգություն» խորագրով գիտաժողովին՝ որպես նախագահող:*

5. Քննարկված թեմաները.

   - *Հայկական պատմամշակութային ժառանգության պահպանություն և հանրահռչակում, Ֆրանսիայի հետ մշակույթի ոլորտում համագործակցության ուղղություններ և ընթացիկ ծրագրեր*
   - *Ֆրանսիայի պատմամշակութային ժառանգության ինստիտուտի հետ համագործակցության շարունակականության ապահովում:*

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

*2023 թ. դեկտեմբերի 19-ին Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում կայացավ հայկական պատմամշակութային ժառանգությանը նվիրված գիտաժողով, որը նախաձեռնել էր Ֆրանսիայի մշակույթի նախարարության Համաշխարհային պատմամշակութային ժառանգության առաքելության ղեկավար Բրունո Ֆավելը՝ Ֆրանսիայի պատմամշակութային ժառանգության ինստիտուտի հետ համագործակցությամբ:*

*Գիտաժողովի բացմանը ելույթներով հանդես եկան Ֆրանսիայի մշակույթի նախարար Ռիմա Աբդուլ Մալաքը, Ֆրանսիայում ՀՀ դեսպան Հասմիկ Տոլմաջյանը, Ֆրանսիայի պատմամշակութային ժառանգության ինստիտուտի տնօրեն Շառլ Պերսոնան:*

Գիտաժողովը բաղկացած էր երկու նստաշրջանից.

1. «Հայաստանի պատմամշակութային ժառանգություն» (Ֆրանսիայում հայկական հավաքածուներ, Հնագիտական ժառանգություն, հնագիտական վայրերի պեղումներ, Հայկական ճարտարապետություն, ժամանակակից արվեստներ, երաժշտություն, կինո),
2. «Հայկական պատմամշակութային ժառանգություն» (Հայկական սփյուռքի պատմության և հիշողության ներմուծում Ֆրանսիայի հանրային կյանք, Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային ժառանգություն, Հայկական պատմամշակութային ժառանգություն Մերձավոր և Միջին Արևելքում, Նոր տեխնոլոգիաների կիրառումը հայկական պատմամշակութային ժառանգության պահպանության գործում):

«Հայաստանի պատմամշակութային ժառանգություն»-ը նստաշրջանին, որը նախագահում էր նախարարություն մշակութային ժառանգության վարչության պետ Աստղիկ Մարաբյանը, զեկույցով հանդես եկան Հնագիտության ազգային թանգարանի տնօրեն Ռոզ Մարի Մուսյոն, Լուվրի թանգարանում Բյուզանդական և Արևելքի քրիստոնեական ժառանգության նորաստեղծ դեպարտամենտի տնօրեն Մաքսիմիլիան Դյուրանը, Լուվրի թանգարանի Արևելքի անտիկ շրջանի դեպարտամենտի փոխտնօրեն Վենսան Բլանշարը , Իլ-դը-Ֆրանս շրջանի մշակութային ժառանգության տնօրինության ղեկավար, հնագետ Ստեֆան Դեշամը, ճարտարապետ, ժառանգության վայրերի և համաշխարհային ժառանգություն - ժառանգության ծառայություն ղեկավար Ռոլանդ ՊԵԼԹԵԿՅԱՆը, Մերձավոր և Միջին Արևելքի, Կովկասի և Ասիայի ծրագրի, տեսողական արվեստի և գեղարվեստական և մշակութային կրթության Եվրոպական և միջազգային կապերի ենթաբաժնի ղեկավար Թոմաս Բրեժոնը, Շայոտ դպրոցի փոխտնօրեն Դելֆին Աբուլկերը, Ռե-Շկոլա դպրոցի դնօրեն ճարտարապետ Նարինե Տյուտչևան:

Երկրորդ նստաշրջանի բանախոսներն էին Միջին Արևելքում քրիստոնյաների պաշտպանության հարցերով զբաղվող ՀԿ գլխավոր տնօրեն, արքեպիսկոպոս Պասկալ Գոլնիշը, Պատմամշակութային կոթողների թվայնացմամբ և վիրտուալ վերականգնմամբ զբաղվող «ICONEM» ֆրանսիական ստարտափի նախագահ Իվ Ուբելմանը, ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի 3D սկանավորման ծրագրի ղեկավար Հուլե Քեշիշյանը: Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (CNRS) հետազոտությունների գծով տնօրեն Կլեր Մուրադյանը, հայկական պատմամշակութային ժառանգության անկախ հետազոտող Հարություն Խաչատուրյանը, ինչպես նաև Էրբիլի Սալահդին համալսարանի հնագիտության պրոֆեսոր, Իրաքյան Քրդստան, IFPO-ի և Արևելքի և Միջերկրական ծովի լաբորատորիայի ասոցիացված անդամ Նարմեն Ալին:

Գիտաժողովն ամփոփվեց Ֆրանսիայի մշակույթի նախարարության Համաշխարհային պատմամշակութային ժառանգության առաքելության ղեկավար Բրունո Ֆավելի ամփոփիչ ելույթով, որը ևս մեկ անգամ ընդգծեց համատեղ ջանքերի և նմանատիպ միջոցառումների կազմակերպման կարևորությունը հայկական մշակութային ժառանգության պահպանության գործում, ինչպես նաև հայտարարեց, որ առաջիկա ամիսներին հանդես է գալու «Եվրոպայում հայկական պատմամշակութային ժառանգության ուղու» ստեղծման նախաձեռնությամբ:

Գիտաժողովի շրջանակում առանձին հանդիպումներ եմ ունեցել նաև մասնակիցների հետ, որոնց հետ քննարկվել են հայկական մշակութային ժառանգության առնչվող հարցերը, առկա խնդիրները և համագործակցության հնարավորությունները:

Այցի շրջանակում աշխատանքային ոչ պաշտոնական հանդիպում է կայացել նաև Պատմամշակութային ժառանգության ինստիտուտի տնօրեն Շառլ Պերսոնային հետ. քննարկվել են Ինստիտուտի հետ համագործակցության հեռանկարները և նոր ծրագրերի հնարավորությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- *«Եվրոպայում հայկական պատմամշակութային ժառանգության ուղու» ստեղծման ուղղությամբ աշխատանքների մեկնարկ:*
- *Պատմամշակութային ժառանգության ինստիտուտի տնօրեն Շառլ Պերսոնային հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց հստակեցնել ժառանգության ոլորտի մասնագետների վերապատրաստումների 2024 թվականի ծրագիրը:*

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- *Առաջարկվում է պարբերական դարձնել արտերկրում հայկական մշակութային ժառանգության պահպանությանը և հանրահռչակմանն ուղղված նմանատիպ միջոցառումների անցկացումը,*
- *Դիտարկել աջակցությունը և մասնակցությունը «Եվրոպայում հայկական պատմամշակութային ժառանգության ուղու» ստեղծման նախաձեռնությանը,*
- *Շարունակել հետագա քննարկումները Ֆրանսիայի ժառանգության ինտիտուտի հետ՝ համագործակցության երկրորդ փուլի ծրագրի վերաբերյալ:*

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

*Դեկտեմբերի 26, 2023*

*Աստղիկ Մարաբյան*